Յովակիմ և Հապէչաց Յովհաննէս, և՝ի հարցանել դատաւորին՝ եառն պատասխանի, փոխանորդն Լատինաց արարեալ է զայսոսիկ, մի յառաջագոյն յարդարեալ էր տեղին երեք դուներան մանր քարամբք (մէսխոն) կարմիր սեաւ և սպիտակ, զորս թաղեալ էր փոխանորդն՝ ի ներքոյ նոր քարանց, պատճառելով թէ՝ մի ման նորա ապականեալ էր, բարկացեալ ընդ այս պատրիարքին Ցունաց ասէ՝ մինչդեռ չրջէի՝ ի կողմանս Գալիլեացւոց, Սիւրիոյ և Արաբիոյ՝ Լատինք հակառակ հրամանին արարեալ են զայդ, զի քարինք տեղւոյն այնորիկ կարի անդին էին, եւ ոչ փոքր ման անգամ վնասեալ էր. վկայեցին այսմ և այլազգիք, ապա հրամայեաց դատաւորն քակել զքարինն և բառնալ զվանդակն։ Իսկ՝ ի քննութեան դմբեթին չգտին հակառակ ինչ հրամանին։ Եհարց դատաւորն ցայլազգի դռնապանս տաճարին, թէ զոհ իցեն՝ ի քրիստոնէից, և նոքա ասեն՝ զոհ եմք, և ոչ մի ինչ վնաս հասեալ է մեզ մինչեւ ցայսօր, եւ եմք՝ ի խաղաղութեան։ Զայս ամենայն քաղեցաք՝ ի յեկակարէ դատարանի դրեալ յԻ Րէպիլ էվվէլ ամոյ, ՉՃԳ (1554)։

Իսկ Մարինոս Լատին՝ զայսմ դատաստանէ՝ ի նզաստ իւր խօսի՝ այսպէս, ճշմարիտ քարն յորոյ վերայ պատեցաւ Քրիստոս. ծածկեաց զայն հայրն Պոնիփակիոս Ռակուզացի. զի մի խանգարեսցի յանխոհեմից. եւ թէ սոյն տեղին սեփհականութիւն էր Լատինաց. գնեալ՝ ի Ռոսերթոս թագաւորէն Սիկիլիոյ՝ ի Սուլթանացն Եգիպտոսի, եւ ժառանգեալ իցեն զամս 420. յետոյ վիրք տուեալ զնեծ գումարս դրամոց թագաւորին Օսմանցւոց և առեալ զտեղին։ Լատինք վերստին դարձուցեալ են զայն միջնորդութեամբ դեսպանին Գաղղիոյ, որոյ դժկամակ լեալ վրաց դիմեալ են առ դատաւորն եւ չ՝չահեալ ինչ։ Եւ՝ի սոյն ժամանակի իչխանն Թօսքանայ պատուեալ է զտեղին պղնձեայ տապանակաւ՝ ի չափ նոյն տեղւոյ, յորոյ վերայ նկարեալ խորհուրդ չարչարանաց Քրիստոսի, այսպիսի վերտառութեամբ։ «ՖՐԵՏԵՐԻԿՈՍ ՄԷՏԻՔՈՍ ԴՈՒՔՈՍ ԹՕՍՔԱՆԱՑ Ի ՆՇԱՆ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1278», յորոյ վերայ պատարագէին Լատինք։

Գերմանոս նստեալ էր յաթոռ Պատրիարքութեան Ցու-